ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2021թ. № 97

ԱՐՏՅՈՄ ՄԱԹԵՎՈՍԻ ՄԱԿԱՐՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Արտյոմ Մաթևոսի Մակարյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել իրեն սեփականության իրավունքով պատկանող «MERCEDES-BENZ S 500» մակնիշի փոխադրամիջոցի (պետհամարանիշ՝ 35CD332) 2016-ից 2020 թվականների գույքահարկը վճարելու պարտավորությունը, որը 2021 թվականի փետրվարի 19-ի դրությամբ կազմում է **երկու միլիոն տասնինը հազար ինը հարյուր յոթանասունհինգ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **մեկ միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար վեց հարյուր** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **չորս հարյուր յոթանասունմեկ հազար երեք հարյուր յոթանասունհինգ** ՀՀ դրամ՝ *որոշում եմ.*

1. Արտյոմ Մաթևոսի Մակարյանից հօգուտ Սպիտակ համայնքի գանձել **երկու միլիոն տասնինը հազար ինը հարյուր յոթանասունհինգ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **մեկ միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար վեց հարյուր** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **չորս հարյուր յոթանասունմեկ հազար երեք հարյուր յոթանասունհինգ** ՀՀ դրամ:

2. Հանձնարարել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին, սույն որոշման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եռօրյա ժամկետում իրազեկել Արտյոմ Մաթևոսի Մակարյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Սույն որոշման պահանջը չկատարելու դեպքում, այն ենթակա է կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021 փետրվարի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2021թ. № 98

ԱՐՇԱԿ ՎՐԵԺԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի կողմից 2021 թվականի փետրվարի 5-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, հաշվի առնելով Սպիտակ համայնքի բնակիչ Արշակ Վրեժի Դավթյանն ինքնակամ զավթել է Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0276-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության այլ գործառնական նշանակության հողամասից 0,00948 հա մակերեսով հատված և չի վերացրել դրա հետևանքները՝ ***որոշում եմ.***

1. Արշակ Վրեժի Դավթյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Արշակ Վրեժի Դավթյանին:

3. Արշակ Վրեժի Դավթյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արշակ Վրեժի Դավթյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2021թ. № 99

ԱԼՎԱՐԴ ԳԵՎՈՐԳԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի կողմից 2021 թվականի փետրվարի 5-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, հաշվի առնելով Սպիտակ համայնքի բնակիչ Ալվարդ Գևորգի Պողոսյանը ինքնակամ զավթել է Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0499-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի գործառնական նշանակության հողամասից 0,00098 հա մակերեսով հատված և չի վերացրել դրա հետևանքները՝ *որոշում եմ.*

1. Ալվարդ Գևորգի Պողոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Ալվարդ Գևորգի Պողոսյանին:

3. Ալվարդ Գևորգի Պողոսյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալվարդ Գևորգի Պողոսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2021թ. № 100

ԹԱՄԱՐԱ ՌԱՖԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի կողմից 2021 թվականի փետրվարի 5-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, հաշվի առնելով Սպիտակ համայնքի բնակիչ Թամարա Ռաֆիկի Հովակիմյանն ինքնակամ զավթել է Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0094-0027 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի գործառնական նշանակության հողամասից 0,07689 հա մակերեսով հատված և չի վերացրել դրա հետևանքները՝ ***որոշում եմ.***

1. Թամարա Ռաֆիկի Հովակիմյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Թամարա Ռաֆիկի Հովակիմյանին:

3. Թամարա Ռաֆիկի Հովակիմյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թամարա Ռաֆիկի Հովակիմյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2021թ. № 101

ՍԱՍՈՒՆ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՇԱԿԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Արման Ավետիսյանի և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գարիկ Աբգարյանի կողմից 2021 թվականի փետրվարի 5-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի բնակիչ Սասուն Գևորգի Մաշակարյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ «ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան փող., թիվ 55» հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցել է շինություն՝ ***որոշում եմ.***

1. Սասուն Գևորգի Մաշակարյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Սասուն Գևորգի Մաշակարյանին:

3. Սասուն Գևորգի Մաշակարյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սասուն Գևորգի Մաշակարյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը վարչական կարգով կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2021թ. № 102

ՀՐԱՉԻԿ ԱՋԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 0259612 վկայականը և Հրաչիկ Վաչիկի Աջամյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հրաչիկ Վաչիկի Աջամյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան փողոցի վրա գտնվող 0,008 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 63,201 քառակուսի մետր մակերեսով խանութին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 65» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2021թ. № 103

ԳԱԳԻԿ ՌՈԲԵՐՏԻ ՂՈՐՈՒԽՉՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 5-ի թիվ 6-Ա որոշումը, հաշվի առնելով այն հանգամանքը, Գագիկ Ռոբերտի Ղորուխչյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0508-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության 0,05166 հեկտար մակերեսով հողամասին կից Սպիտակ համայնքի Շահումյան փողոց, թիվ 73/2 հասցեում գտնվող 06-006-0508-0036 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,001659 հեկտար մակերեսով հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ, 4-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով Գագիկ Ռոբերտի Ղորուխչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Շահումյան փողոց, թիվ 73/2 հասցեում գտնվող 06-006-0508-0036 կադաստրային ծածկագրով 0,001659 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը տվյալ պահին գործող կադաստրային գնի

չափով՝ 47 904 ՀՀ դրամ, ուղղակի վաճառքով օտարել Գագիկ Ռոբերտի Ղորուխչյանին (ծնված 28.02.1968թ.):

2. Գագիկ Ռոբերտի Ղորուխչյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3.Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2021թ. № 104

ՀԱՍՄԻԿ ԼԵՎՈՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լևոն Մովսեսի Սահակյանի մահից հետո Սպիտակ համայնքի Առափնյա թաղամասում գտնվող անշարժ գույքի 1/2 մասը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2016 թվականի հունվարի 29-ի վկայագրի փոխանցվել է Հասմիկ Սահակյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Հասմիկ Լևոնի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հասմիկ Լևոնի Սահակյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Առափնյա թաղամասում գտնվող 0,047 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Առափնյա թաղամաս, թիվ 54/1» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2021թ. № 105

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 295-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի՝ որոշում եմ.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման և օտարման աճուրդային հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Գագիկ Սահակյան - Սպիտակ համայնքի ղեկավար

Աճուրդավար՝

Վարդան Սահակյան - Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ

Արձանագրող՝

Լուսինե Համբարյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Հենրիկ Միրզոյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ

Արման Ավետիսյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ

Գարիկ Աբգարյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ

Սարգիս Թամամյան – Սպիտակ համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2021թ. № 106

ՔՆՔՈՒՇ ՋՈՒԼՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ, ԽՈՀԱՆՈՑԸ, ՄԱՌԱՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 8-րդ կետով և 13-կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Քնքուշ Վաղոյի Ջուլհակյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ «ք.Սպիտակ, Չարենցի փողոց, թիվ 152/1» հասցեում գտնվող 06-006-0511-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,05147 հեկտար մակերեսով հողամասի վրա 2005 թվականին ինքնակամ կառուցել է 31,85 քառակուսի մետր մակերեսով բնակելի տուն, 8,45 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբ, 7,79 քառակուսի մետր մակերեսով խոհանոց, 22,89 քառակուսի մետր մակերեսով մառան և 1,38 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպ, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1156408 վկայականը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Քնքուշ Վաղոյի Ջուլհակյանի 2021 թվականի հունվարի 20-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Քնքուշ Վաղոյի Ջուլհակյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Չարենցի փողոց, թիվ 152/1 հասցեում գտնվող 06-006-0511-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման

գործառնական նշանակության 0,05147 հեկտար մակերեսով հողամասի վրա կառուցված 31,85 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 8,45 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը, 7,79 քառակուսի մետր մակերեսով խոհանոցը, 22,89 քառակուսի մետր մակերեսով մառանը և 1,38 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Քնքուշ Վաղոյի Ջուլհակյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Քնքուշ Վաղոյի Ջուլհակյանին.

1) համայնքի բյուջե վճարել 75 216 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 19

ք.Սպիտակ